



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

14 May 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Մոտենալով ուսումնական տարվա վերջին շաբաթին, ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այս դժվարին ժամանակաշրջանում միավորվելու համար: Բազմաթիվ հարցեր կան, մինչև դպրոցների բացվելը, որոնց պատասխանը մենք դեռ չունենք: Մենք հնարավորություններ ենք ստեղծում շարունակական ներգրավվածություն տալու, բյուջեի վերաբերյալ առաջարկություններ ստանալու և դպրոցները բացելու վերաբերյալ: Առաջիկա մի քանի շաբաթների ընթացքում, մենք ձեզ լրացուցիչ տեղեկություն կուղարկենք այդ ներգրավվածությունների վերաբերյալ:

2020 թվականի շրջանավարտներ

Մենք կշարունակենք հետևել առողջապահական ուղղորդումներին, որպեսզի որոշենք, թե կարող ենք անձամբ տոնել ավարտական հանդեսը (համապատասխան առողջապահական զգուշությամբ) շրջանավարտների մասնակցությամբ: Եթե կարողանանք ինչ որ մի բան անել ամառվա ընթացքում, ապա կանենք, իսկ եթե ոչ, որևէ տոնակատարություն կամ հավաքույթ կկազմակերպենք մյուս տարի: Միաժամանակ, ես ցանկանում եմ իմ խոսքն ասել 2020 թվականի շրջանավարտներին:

2020 թվականի սիրելի շրջանավարտներ.

Մովորական տարում, ես այս նամակը կսկսեի «շնորհավորանքներս» բառով, բայց մենք բոլորս էլ գիտենք, որ սա սովորական տարի չէ: Մեր կյանքը, հատկապես ձերը, գլխիվայր է շրջվել: Դուք քրտնաջան աշխատել էք 13 տարիների ընթացքում այս օրվան հասնելու համար: Սա պետք է լինի տոնակատարության և արտացոլման ժամանակ, բայց ձեր ավարտական տարվա միջոցառումներից շատերը տեղի չունեցան: Թեև ոչ մեկի մեղքը չէ, որ այս համաճարակը տեղի ունեցավ, ես հասկանում և ցավում եմ ձեզ համար: Այսպիսով, ի՞նչ պետք է անել ճգնաժամային այս վիճակում: Մենք սգում ենք: Մենք բոլորս տարբեր կերպ ենք սգում: Այն միատիպ չէ: Այն կանխատեսելի չէ: Այն նույնը չէ բոլորի համար: Անկախ նրանից, թե որտեղ եք գտնվում, ինդրում եմ հիշել, որ մենք այն կհաղթահարենք միասին: Նրանք, ովքեր դեռ պատրաստ չեն տոնակատարության, ես հասկանում եմ: Խնդրում եմ օգնություն խնդրել այն անձից, ում որ դուք վստահում էք և նա կօգնի ձեզ այս դժվարին պահին: Նրանք, ովքեր պատրաստ են տոնել՝ շնորհավորում եմ:

Ուրեմն ի՞նչ է լինելու: Կլինեն հնարավորություններ, անհաջողություններ և հաջողություններ: Ձեր ամբողջ կյանքն առջևում է: Սովորեք ձեր անցյալից, վայելեք ներկան և պլանավորեք ապագայի համար: Ահա սա է եղել այն խորհուրդը, որին ես փորձել եմ հետևել, բայց ես, ինչպես մնացած բոլորը, շատ անգամ չեմ հետևում այս խորհրդին: Փոխարենը, այս ճգնաժամը հիշեցնում է ինձ գնահատել այն ինչ ունեմ այսօր:

2020 թվականի շրջանավարտները հանդիպեցին զգալի դժվարությունների, բայց դրանց պատճառով ավելի հզորացան: Ես համոզված եմ, որ 2020 թվականի շրջանավարտները կտանեն մեզ դեպի պայծառ ապագա:

Բյուջե

Այսօր, նահանգապետ Նյուտոնը հրապարակեց նահանգային բյուջեի [Մայիս ամսվա փոփոխությունները](#), որոնք զգալի կրճատումներ են պարունակում: Եթե այս բյուջեն իրականացվի, այն լիովին կազդի ԲԴՄՇ-ի վրա: Կալիֆոռնիայի դպրոցների խորհրդի ասոցիացիան հեշտացրեց մեզ համար շեշտադրել պետական կրթության ֆինանսավորումը պաշտպանելու անհրաժեշտությունը: [Սեղմել այստեղ ձեր օրենսդիր մարմիններին էլեկտրոնային նամակ ուղարկելու համար:](#) Երեքշաբթի, մայիսի 19-ին, երեկոյան ժամը 7-ին, տեղի կունենա կրթական գրասենյակի հատուկ ժողովը, որի ընթացքում կքննարկվի բյուջեի տարբեր իրավիճակներ և դրամահավաքի առաջնահերթություններ: Ժողովը դիտելու համար [սեղմել այստեղ:](#)

Դպրոցների բացումը 2020-21 ուսումնական տարում

Մենք շարունակում ենք ուսումնասիրել, թե ինչ են անում մյուս երկրները, նահանգները և դպրոցական շրջաններն դպրոցները բացելու համար: Մենք պատրաստում ենք մի քանի իրավիճակներ, որոնք ձևավորություն կպահանջեն նահանգային կառավարությունից և կախված կլինի նաև պետական ֆինանսավորումից (խնդրում եմ նայել ներքև): Մենք գիտակցում ենք, որ կրթությունը կտարբերվի կրթական մեր անցյալ մոդելից և հեռակա ուսուցման մոդելից, որը մենք իրականացրեցինք: Լրացուցիչ ուղղորդություն ստանալով, մենք կհարցնենք ձեր կարծիքը և կխոսենք կրթական նոր մոդելների մասին: Չնայած այն շատ բարդ կթվա, բայց մենք կօգտվենք այս հնարավորությունից ստեղծագործ միտք արտահայտելու և վերսկսելու կրթությունը մեր աշակերտների, ընտանիքները և աշխատակիցների կարիքները հոգալու համար:

Շրջանի տեխնոլոգիական սարքեր, որոնցից օգտվում են աշակերտները

Գավառի, տանը մնալու հրամանին ենթարկվելու և մեր ընտանիքների և աշխատակիցների անվտանգությունը ապահովելու համար, մենք հետաձգում ենք տեխնոլոգիական սարքերի հավաքումը և համացանցից օգտվելու հնարավորությունը, որը տրամադրվել էր մեր աշակերտներին/ընտանիքներին, **քանի դեռ ձեր երեխան չի տեղափոխվում իր դպրոցից կամ մեր դպրոցական շրջանից:** 5-րդ, 8-րդ և 12-րդ դասարանցիները լրացուցիչ տեղեկություն կստանան այս գործընթացի վերաբերյալ: Բոլոր մյուս աշակերտները պետք է շրջանի սարքավորումները պահեն տոպրակի մեջ մինչև դպրոցին հանձնելը: Տեխնոլոգիական սարքերը պետք է անջատված մնան և բոլոր մասերն իրար հետ, օրինակ էլեկտրական

մալուխը, եթե դրանից չէք օգտվում: Եթե շարունակելու եք օգտագործել այն, ապա պետք է կանոնավոր ձևով լիցքավորել:

Մանրի ծառայություններ

ԲԴՄՇ-ի սննդի բաշխման վերջին օրը կլինի **ՄԱՅԻՍԻ 20-Ը**: Համաճարակի EBT օգնություն հնարավոր է ստանալ, որպեսզի դպրոցները փակ լինելու ընթացքում ընտանիքները կարողանան սնունդ գնել: Երեխա ունեցող ընտանիքները, որոնք արդեն ստանում են CalFresh, CalWorks կամ Medi-Cal-ի որևէ ծառայություն կարիք չունեն դիմելու: Նրանք փոստով կստանան իրենց P-EBT քարտերը մայիս ամսվա ընթացքում: Այն ընտանիքները, որոնք այժմ անվճար կամ զեղչված գնով սնունդ են ստանում, և չեն ստանա իրենց P-EBT քարտերը մինչև 2020 թվականի մայիսի 22-ը, **պետք է համացանցում դիմումագիր լրացնեն մայիսի 22-ից սկսած մինչև հունիսի 30-ը**: Խնդրում ենք հյուրընկալել այս կայքէջը. <https://www.CDSS.ca.gov/home/pandemic-ebt>. **Մայիսի 22-ին դուք կարող եք դիմել համացանցի այս www.CA.P-EBT.org կայքի օգնությամբ**:

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն: Շրջանային նորությունների հաջորդ թողարկումը կլինի մյուս հինգշաբթի օրը, **մայիսի 21-ին**:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ